

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

14.03.2005թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը ՀՀ ՎՊԽ քարտուղար Գ.Սարոյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ.Գյուրջյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. 2004թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:

/Ձեկուցող՝ Լ.Միրզոյան/

Որոշեցին՝

Հաստատել 2004թ. պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը:

/Անհատական/

2. ՀՀ ՎՊԽ 2002թ. հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին:

/Ձեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

ՀՀ ՎՊԽ 2002թ. հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 110-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1. որոշմամբ հաստատված հավելված 1-ի 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «Ժբ» ենթակետով.

«Ժբ) կազմակերպում և իրականացնում է Ծառայության տեղեկատվական քաղաքականության և հասարակայնության հետ կապերի աշխատանքները»:

2. որոշմամբ հաստատված հավելված 2-ի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժին.»

3. որոշմամբ հաստատված հավելված 3-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

ՀՀ ԱՎԾ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՉԱՓԸ

Հ/Հ	Գույքի տեսակը	հաշվեկշռային արժեքը (հազ. դրամ)
1.	Շենքեր, շինություններ	8654.5
2.	Մեքենաներ և սարքավորումներ	506579.7
	այդ թվում` համակարգիչներ	278321.4
3.	Տրանսպորտային միջոցներ	79917.7
4.	Արտադրական ու տնտեսական գույք	63050.4
5.	Գրադարանային ֆոնդ	1253.3
	Ընդամենը	659455.6

/Նորմատիվ/

21.03.2005թ. նիստին

Մասնակցում էին`

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ` Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, Վ. Դավթյանը ՀՀ ՎՊԽ քարտուղար Գ. Սարոյանը.

Հրավիրված էին`

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Գ.Ֆրանգուլյանը.

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1. «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը» հաստատելու մասին.

/Ձեկուցող` Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

1. Հաստատել «2005թ. ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը».

2. Մինչև այժմ հաստատված Կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթերը համարել ուժ ունեցող միայն տվյալ տարվա հետազոտությունների ժամանակաշրջանի համար.

/Անհատական/

2. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

2.1. Հաշվետվություն 2005թ. մարտի 1-4-ը Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 36-րդ նստաշրջանին մասնակցության վերաբերյալ.

/Զեկուցող՝ Ս. Մնացականյան, Ա. Սաֆյան/

2.2 Հաշվետվություն 2005թ. փետրվարի 26-ից մինչև մարտի 12-ը Նյու Յորքում կայացած ՄԱԿ-ի կանանց կարգավիճակի հանձնաժողովի 49-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցության վերաբերյալ.

/Զեկուցող՝ Հ. Պետրոսյան/

Որոշեցին՝

Հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

/Արձանագրային/

26.04.2005թ. նիստին

Մասնակցում էին՝

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Վ.Դանիելյանը, Հ.Պետրոսյանը, Յու.Պողոսյանը, Վ. Դավթյանը ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա. Աղազարյանը.

Հրավիրված էին՝

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա.Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Գ.Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ.Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան, Վիճակագիր, փորձագետ Ի.Զիթչյանը:

Նիստում լավեցին հետևյալ հարցերը.

1.«Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում մատուցված ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ծառայություն (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Պետրոսյան, Ա. Հարությունյան/

Որոշեցին՝

«Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում մատուցված ծառայությունների ծավալի մասին» Ձև թիվ 1-ծառայություն (Տեղեկատվական տեխնոլոգիա) (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին հարցի քննարկումը հետաձգել, կազմակերպել աշխատանքային կարգով քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ և հաշվետվության ձևի և լրացման հրահանգի վերջնական տարբերակը ներկայացնել 02.05.2005թ. ՀՀ ՎՊԽ նիստում:

/Արձանագրային/

2. ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի ձևաչափով ՀՀ ԱՎԾ կողմից վարվող 12 խումբ տվյալների մեթոդական նկարագրությունների (մեթատվյալների) հայերեն և ռուսերեն նախագծերին հավանություն տալու մասին:

/Զեկուցող՝ Վ. Դանիելյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ ԱՄՀ Տվյալների տարածման հատուկ ստանդարտի ձևաչափով ՀՀ ԱՎԾ կողմից վարվող 12 խումբ տվյալների մեթոդական նկարագրությունների (մեթատվյալների) հայերեն նախագծին:

/Անհատական/

3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

3.1 Հաշվետվություն 2005թ. մարտի 23-ից ապրիլի 2-ը Վաշինգտոնում կայացած աշխատանքային հանդիպումներին և «Աղքատության գնահատումը և վերլուծությունը» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ:

/Ներկայացնող՝ Ս. Մնացականյան, Գ. Գևորգյան, Ա. Սաֆյան,

Գ. Մարտիրոսովա, Ա. Գյուլբեկյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2005թ. մարտի 23-ից ապրիլի 2-ը Վաշինգտոնում կայացած աշխատանքային հանդիպումներին և «Աղքատության գնահատումը և վերլուծությունը» թեմայով սեմինարին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

3.2 Հաշվետվություն 2005թ. ապրիլի 5-8-ը Ստրասբուրգում կայացած Եվրոպայի խորհրդի Եվրոպական բնակչության կոմիտեի նիստի և «Սոցիալական կապակցության ժողովրդագրական խնդիրները» խորագրով Եվրոպական բնակչության կոնֆերանսի վերաբերյալ:

/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան/

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 2005թ. ապրիլի 5-8-ը Ստրասբուրգում կայացած Եվրոպայի խորհրդի Եվրոպական բնակչության կոմիտեի նիստի և «Սոցիալական կապակցության ժողովրդագրական խնդիրները» խորագրով Եվրոպական բնակչության կոնֆերանսի վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

/Արձանագրային/

4. Այլ հարցեր

4.1 ՀՀ սպառողական շուկայում ձկնամթերքի սպառման ծավալների և գների փոփոխությունների մասին տեղեկանքին հավանություն տալու մասին.

/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/

Որոշեցին՝

Հավանություն տալ ՀՀ սպառողական շուկայում ձկնամթերքի սպառման ծավալների և գների փոփոխությունների մասին տեղեկանքին:

/Արձանագրային/